ԶՈՐԱՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ, ԳԻՏՆԱԿԱՆԸ, ՄԱՐԴԸ

Կ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայ ժողովրդի ծոցից դուրս եկած տաղանդավոր զորահրամանատարների համաստեղության մեջ ամենապայծառը Խորհրդային Միության մարշալ, կրկնակի հերոս Հովհաննես Խաչատուրի (Իվան Քրիստոփորի) Բաղրամյանն է, որի ծննդյան 100-ամյակը նշվում է այս օրերին։

Բաղրամյանի անունը ոսկե տառերով է գրված Խորհրդային Միության ժողովուրդների Հայրենական մեծ պատերազմի պատմության տարեգրության մեջ և առանձնակի տեղ է գրավում այնպիսի ականավոր զորահրամանատարների շարքում, ինչպիսիք են՝ Խորհրդային Միության մարշալներ, Խորհրդային Միության քառակի հերոս Գեորգի Ժուկովը, կրկնակի հերոսներ Ալեքսանդր Վասիլևսկին, Կոնստանտին Ռոկոսսովսկին, Իվան Կոնևը, Ռոդիոն Մալինովսկին, հերոսներ Անդրեյ Երյոմենկոն, Լեոնիդ Գովորովը, Ֆյոդոր Տոլբուխինը, որոնք պատերազմի եզրափակիչ շրջանում ռազմաճակատների հրամանատարներ էին և պատմության մեջ մնացել են «հաղթանակի մարշալներ» անունով[1]։

---

1 Կ. Ա. Հարությունյան, Մարշալ Բաղրամյան, Ե., 1997, էջ 6։

Հովհաննես Բաղրամյանն անցել է կյանքի դժվարին ու լարված ուղի։ Նա շարքային զինվորից հասել է մարշալի բարձր աստիճանի։ Մարշալի ռազմագիտական հարուստ ժառանգությունը, ռազմական արվեստի և պատմության վերաբերյալ նրա կարդացած դասախոսություններն ու հրատարակած գործերը, կյանքի հարուստ փորձը և մարզկային նկարագիրը արժանի են ոչ միայն բազմակողմանի, խոր ուսումնասիրության, այլև նորաստեղծ Հայկական բանակի գեներալների, սպաների ու զինվորների կողմից ընդօրինակման։ Այն վիթխարի նշանակություն կունենա հատկապես Հայաստանի Հանրապետության մատաղ սերնդի և երիտասարդության՝ պետական կարևոր նշանակություն ունեցող ռազմահայրենասիրական դաստիարակության գործի կազմակերպման խնդրում։

Հովհաննես Բաղրամյանը ծնվել է 1897 թ. դեկտեմբերի 2-ին, Ռուսական կայսրության Ելիզավետպոլի նահանգի Ելիզավետպոլ (Գանձակ) քաղաքի երկաթուղային կայարանի բանվորական ավանում[2]։ 1907—1912 թթ. նա սովորում և դերազանցությամբ ավարտում է Ելիզավետպոլի երկաթուղային ուսումնարանը։ Նույն թվականին, գերազանց հանձնելով ընդունելության քննությունները, 15-ամյա Հովհաննեսն ընդունվում է Թիֆլիսի երկաթուղային տեխնիկական ուսումնարան։ 1915 թ. մայիսի վերջին, դարձյալ գերազանցությամբ, ավարտում է ուսումը և, որպես երկաթգծի տեխնիկ, աշխատանքի նշանակվում Անդրկովկասյան երկաթուղու Ելիզավետպոլի 9-րդ գծամասում։ Սակայն Առաջին համաշխարհային պատերազմի իրադարձությունները և արևմտահայության Մեծ եղեռնը ստիպեցին 18-ամյա Հովհաննես Բաղրամյանին կամավոր մեկնել ռազմաճակատ՝ չնայած, որպես երկաթուղու աշխատող, զինծառայությունից ազատվելու իրավունքներին։

«Ես այլևս չէի կարող հեռու կանգնել իմ հարազատ ժողովրդի ատելի թշնամու դեմ պայքարից,—հետագայում իր հուշերում գրել է Բաղրամյանը։— Ես 18 տարեկան էի և բավականաչափ պարզ հասկանում էի Կովկասյան ռազմաճակատում ստեղծված ռազմական գործողությունների և Թուրքիայում արյունալի իրադարձությունների էությունը... Դրա հետ մեկտեղ լավ էի հասկանում, որ միայն ռուսական զինվորի հետ մեկտեղ, ուս-ուսի, իմ ուժերը կպատեին մարտնչել թուրքական դահիճների դեմ։ Այդ զգացմունքներից մղված, հաղթահարելով ծնողներիս դիմադրությունը, 1915 թ. հոկտեմբերի 9-ին ես կամավոր ծառայության անցա ռուսական բանակում»[3]։

Ախալցխայի 116-րդ պահեստային գումարտակում որոշ ժամանակ զինվորական պատրաստություն ստանալուց հետո, դեկտեմբերի վերջին, Բաղրամյանը մեկնում է ռազմաճակատ և Պարսկաստանի տարածքում գտնվող գեներալ Բարաթովի էքսպեդիցիոն կորպուսի 2-րդ կովկասյան գնդի կազմում, որպես 4-րդ գումարտակի 15-րդ հարյուրյակի շարքային զինվոր, մասնակցում է մարտերին։ Կասրի-Շիրինի գրավման մարտերում դրսևորված քաջության համար հրամանատարությունը նրան ուղարկում է Թիֆլիս՝ ենթասպաների դպրոցում սովորելու։ Այսպես է սկսվում Բաղրամյանի զինվորական ծառայությունը, որը տևում է ուղիղ 67 տարի։

1917 թ. աշնանը ենթասպա Բաղրամյանը Ուրմիա լճի շրջանում մարտնչում է թուրքերի դեմ՝ Հայկական 3-րդ գումարտակի շարքերում, որպես 8-րդ վաշտի դասակի հրամանատար։

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Անդրկովկասն անջատվում է Խորհրդային Ռուսաստանից, որն աղետալի հետևանքներ է ունենում հատկապես հայերի համար։ Օգտվելով ռուսական զորքերի կողմից Կովկասյան ռազմաճակատը զանգվածաբար լքելու առիթից՝ թուրքերը հարձակման են անցնում և կարճ ժամանակամիջոցում գրավում Արևմտյան Հայաստանի ռուսական զորքերի կողմից ազատագրված տարածքները։ Թուրքերի արշավանքը կանգնեցնելու համար ստեղծվում է 20-հազարանոց Հայկական կո-

[2] И. Х. Баграмян. Мои воспоминания. Е., 1979. с. 6.

[3] Նույն տեղում, էջ 25—26։

պուսը՝ գեներալ-մայոր Թովմաս Նազարբեկյանի գլխավորությամբ։ Այդ կորպուսի հատուկ կամավորական դիվիզիայի շարքերում, որպես հեծյալ դասակի հրամանատար, մարտնչում է ենթասպա Բաղրամյանը. դիվիզիայի հրամանատարը ժողովրդական հերոս Անդրանիկն էր։ Հետագայում Փարիզում մարշալ Բաղրամյանը այցելել է Պեր-Լաշեզի գերեզմանոց և ծաղկեպսակ գրել ժողովրդական հերոսի հուշարձանի պատվանդանին՝ հետևյալ մակագրությամբ. «Հավերժ հիշատակ Հայաստանի լեգենդար հերոս Անդրանիկին, որի զինվորը լինելու բախտն եմ ունեցել Հայրենիքի համար ծանրագույն 1918 թվականին»[4]։

Չնայած հայկական զորքերի հերոսական դիմադրությանը, թուրքական 60-հազարանոց գորքը շարունակում է առաջխաղացումը և, գրավելով Կարսն ու Ալեքսանդրապոլը, շարժվում է Ղարաքիլիսա-Երևան ուղղությամբ։ Հայ ժողովրդի համար այդ օրհասական պահին Հայկական կորպուսի զորամասերը, օգնության հասած աշխարհազորայիններ հետ Սարդարապատում կարողանում են ոչ միայն կանգնեցնել թուրքերի հաղթարշավը, այլև նրան ետ շպրտել գրաված դիրքերից։ Սարգարապատի ճակատամարտին սկզբից մինչև վերջ ակտիվորեն մասնակցեց Առաջին հատուկ հայկական հեծյալ գնդի դասակի հրամանատար Բաղրամյանը։ Հետագայում, անդրադառնալով այդ օրերին, Բաղրամյանն իր «Իմ հիշողությունները» աշխատության մեջ նշել է. «Սարդարապատի ճակատամարտի շնորհիվ Արարատյան դաշտավայրը փրկվեց թուրք զավթիչների նոր ջարդերից և այդ տարածքում էր, որ հայ ժողովուրդը վերականգնեց իր պետականությունը»[5]։

Եվ հիրավի, Սարդարապատի ճակատամարտը բախտորոշ նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար. 1918 թ. մայիսի 28-ին, շուրջ հինգուկես դար ընդմիջումից հետո վերականգնվում է հայկական պետականությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության։ Բաղրամյանը ծառայության է անցնում Հանրապետության զինված ուժերում՝ որպես հեծյալ գնդի էսկադրոնի հրամանատար, մասնակցում 1920 թ. սեպտեմբերին սկսված հայ-թուրքական պատերազմին։

Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Բաղրամյանը ծառայում է Հայկական կարմիր բանակի շարքերում՝ որպես առաջին հեծյալ գնդի էսկադրոնի հրամանատար։ 1921 թ. փետրվարի 18—22-ը նա ակտիվորեն մասնակցում է վրացական մենշևիկյան զորքերից Լոռու ազատագրմանը, նշանակվում է Խորհրդային Վրաստանում Խորհրդային Հայաստանի լիազոր ներկայացուցչության զինվորական կցորդ Անդրեյ Մելիք-Շահնազարովի օգնական։ Հենց այդ օրերին էր, որ Բաղրամյանը Թիֆլիսում հանդիպում է Հովհաննես Թումանյանին և օգնում նրան 11-րդ բանակի շտաբից Երևան մեկնելու անցաթուղթ ձեռք բերելու գործում։ Մայիսի սկզբներին Երևան է վերադառնում նաև Բաղրամյանը և նշանակվում Խորհրդային Հայաստանի ռազմժողկոմատի շտաբում՝ որպես շտաբի պետի օգնական՝ օպերատիվ հարցերի գծով։ Այդ պաշտոնում էլ նա 1921 թ. ամռանը մասնակցում է Վայոց ձորի և Զանգեզուրի կռիվներին, ձեռք բերում շտաբային աշխատանքի առաջին փորձը։ Հայաստանում քաղաքացիական կռիվները ավարտվելուց հետո Հայկական կարմիր բանակը ենթարկվում է վերակազմավորման, որի հետևանքով 1922 թ. սեպտեմբերի 5-ին ստեղծվում է Հայկական հրաձգային դիվիզիան՝ Անդրեյ Մելիք- Շահնազարովի հրամանատարությամբ։ Բաղրամյանը նշանակվում է դիվիզիայի հեծյալ գնդի գնդացրային էսկադրոնի, ապա՝ գնդի հրամանատար։ 1921—1923 թթ. Խորհրդային Հայաստանի ռազմական ժողովրդական կոմիսարիատը գլխավորում էին Ալեքսանդր Մյասնիկյանը, ապա՝ Հայկ Բժշկյանը՝ Գայր, որոնց ենթակայության տակ ծառայելը բարերար ազդեցություն է թողնում ապագա մարշալի վրա։ 1924 թ. աշնանը դիվիզիայի հրամանատարությունը

---

4 Գ. Բ. Ղ ա ռ ի բ ջ ա ն յ ա ն, Հայ մեծ զորավարը, Ե., 1997, էջ 12։

5 И. Х. Баграмян, նշվ. աշխ., էջ 94։

նքան գործուղում է սովորելու Լենինգրադի բարձրագույն հեծելազորային դպրոցում։ Այստեղ հրամանատարական տոտջին անհրաժեշտ դիտելիքների ձեռքբերմանը զուգընթաց Բաղրամյանը մտերմիկ հարաբերություններ է ստեղծում իր համակուրսեցիների հետ, որոնք Հայրենական մեծ պատերազմի տարիներին դառնում են ճանաչված զորապետեր։ Նրանց թվում էին ապագա մարշալներ՝ Գ. Ժուկովը, Կ. Ռոկոսովսկին, Ա. Երյոմենկոն և ուրիշներ[6]։

1925 թ. աշնան սկզբներին Բաղրամյանն ուսումն ավարտելուց հետո վերադարձավ Հայաստան, կրկին ստանձնեց հեծյալ զնդի հրամանատարությունը և այն վարեց մինչև 1931 թ.։ 1931—1934 թթ. Բաղրամյանը կրկին Մոսկվայում է՝ որպես Մ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայի ունկնդիր։ Գերազանցությամբ ավարտելով ակադեմիայի հիմնական՝ օպերատիվ ֆակուլտետը, նա 1934 թ. ամռանը նշանակվում է ուկրաինական Ժիտոմիր քաղաքի 5-րդ հեծյալ դիվիզիայի շտաբի պետ։ Այստեղ Բաղրամյանը ծառայեց շուրջ երկուսուկես տարի՝ զործնականում ավելի խորացնելով գիտելիքները։ 1936 թ. աշնանը Բաղրամյանն ընդունվեց Գլխավոր շտաբի նոր բացված ակադեմիան։ Ակադեմիայի առաջին ունկնդիրների թվում էին ապագա մարշալներ՝ Ա. Վասիլևսկին, Մատվեյ Զախարովը, Լ. Գովորովը, հետագայում բանակի գեներալներ՝ Ալեքսեյ Անտոնովը, Նիկոլայ Վատուտինը և ուրիշներ, որոնք Հայրենական մեծ պատերազմի տարիներին գլխավորեցին ռազմաճակատներ, բանակներ, շտաբներ, վարեցին այլ պատասխանատու պաշտոններ։ Գլխավոր շտաբի ակադեմիան Բաղրամյանն ավարտեց 1938 թ. և մինչև 1940 թ. աշնանը աշխատեց որպես ընդհանուր մարտավարության ամբիոնի ավագ դասախոս[7]։ ԽՍՀՄ պաշտպանության ժողկոմի 1940 թ. սեպտեմբերի 2-ի հրամանով գնդապետ Բաղրամյանը նշանակվեց 12-րդ բանակի շտաբի օպերատիվ բաժնի պետ։ 1941 թ. նոր տարին գնդապետ Բաղրամյանը դիմավորեց Կիևում՝ Կիևի հատուկ զինվորական օկրուգի շտաբի պետի տեղակալի, շտաբի օպերատիվ բաժնի պետի նոր պաշտոնում[8]։

Հունիսի 22-ին, պատերազմի առաջին օրը, Բաղրամյանին վստահվեց Կիևի զինվորական օկրուգի վերակազմման հետևանքով ստեղծված Հարավարևմտյան ռազմաճակատի շտաբի պետի տեղակալի և օպերատիվ բաժնի պետի պաշտոնը։ Այս պաշտոնում, ռազմաճակատի համար պատերազմի առաջին օրվանից ստեղծված ծայրահեղ բարդ և անբարենպաստ պայմաններում, նա երբեք խուճապի չմատնվեց և ամենաճգնաժամային պայմաններում անգամ պահպանեց ինքնատիրապետումն ու մարտական ոգին՝ ամբողջ ուժերը նվիրելով թշնամուն արժանի հակահարված տալու գործի կազմակերպմանը։ Հետագայում, վերհիշելով 1941 թ. հունիսի վերջերի այդ ծանր մարտերը, Ժուկովը բարձր է գնահատել Բաղրամյանի անձնվեր աշխատանքը, նրա «մեծ մտազգացությունը և կազմակերպական փայլուն ընդունակությունները, որ դրսևորվեցին այդ խիստ բարդ իրադրության մեջ՝ պատերազմի առաջին օրվանից»[9]։

Այնուհետև գնդապետ Բաղրամյանն ակտիվորեն մասնակցել է Կիևի պաշտպանության գործողությանը։ Կառավարությունը բարձր գնահատեց գնդապետ Բաղրամյանի զինվորական ծառայությունը։ ԽՍՀՄ Ժողկոմխորհի նախագահի 1941 թ. օգոստոսի 12-ի որոշմամբ նրան շնորհվեց գեներալ-մայորի կոչում[10]։ Մի քանի օր անց Բաղրամյանն ընդունվեց կոմկուսի շարքերը[11]։

---

[6] Маршал Баграмян, Сборник документов и материалов. Е., 1997, с. 16.

[7] Նույն տեղում։

[8] Նույն տեղում, էջ 17։

[9] Г. Жуков, Воспоминания и размышления. М., 1970, с. 241.

[10] Правда, 13. VIII. 1941.

[11] И. Х. Баграмян, նշվ. աշխ., էջ 300։

1941 թ. սեպտեմբերի կեսերին ռազմական գործողությունների հետագա զարգացումը ընթանում էր ի վնաս Կիևի պաշտպանների։ Զորակայանի թույլ տված սխալների հետևանքով Հարավ-արևմտյան ռազմաճակատի ավելի քան կես միլիոնանոց զորքերը հայտնվում են շրջապատման մեջ։ Շրջապատման օղակից մարտերով դուրս եկողների մեջ էր գեներալ-մայոր Բաղրամյանը։ Նա իր շուրջն էր համախմբել ռազմաճակատի շտաբի ողջ մնացած անձնակազմին, պահակային ջոկատներին, շրջապատման մեջ հայտնված սպաներին ու զինվորներին, ստեղծել ավելի քան 1000 հոգուց բաղկացած գորաջոկատ, մարտերով նրանց հմտորեն առաջնորդել արևելք, դուրս բերել ծուղակից և ողջ ու առողջ ներկայացրել հարավ-արևմտյան ուղղության հրամանատարության շտաբ։ Այդ սխրանքի համար Բաղրամյանը պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով. դա նրա առաջին մարտական պարգևն էր Հայրենական մեծ պատերազմում[12]։

Կիևի պաշտպանական գործողության ավարտից հետո գեներալ-մայոր Բաղրամյանը նշանակվեց նոր կազմավորված Հարավ-արևմտյան ռազմաճակատի շտաբի պետի տեղակալ, օպերատիվ բաժնի պետ և այդ պաշտոնում էլ մասնակցեց Ռոստովյան և Ելեցյան գործողության մշակմանն ու իրականացմանը։

Հայրենիքը բարձր գնահատեց գեներալ-մայոր Բաղրամյանի ճգնալի ավանդը Ռոստովյան և Ելեցյան գործողությունների մշակման և իրականացման գործում։ ԽՍՀՄ Ժողկոմխորհի նախագահի 1941 թ. դեկտեմբերի 27-ի որոշմամբ նրան շնորհվեց գեներալ-լեյտենանտի կոչում[13]։ Հենց այդ ժամանակ էլ գեներալ-լեյտենանտ Բաղրամյանը նշանակվեց Հարավ-արևմտյան ուղղության զորքերի շտաբի օպերատիվ վարչության պետի պատասխանատու պաշտոնում։

1942 թ. գարնանը և ամռանը անհաջողությունների շրջան եղավ խորհրդային զորքերի համար։ Թշնամին նետվում էր դեպի Ստալինգրադ։ Հունիսի 21-ին զորակայանը լուծարեց հարավ-արևմտյան ուղղությունը, իսկ դրանից մի քանի օր հետո՝ հունիսի 28-ին, գեներալ-լեյտենանտ Բաղրամյանը նշանակվեց Արևմտյան ռազմաճակատի 61-րդ բանակի հրամանատարի տեղակալ։ Հուլիսի 15-ին ստացվեց նոր հրաման՝ Բաղրամյանին Արևմտյան ռազմաճակատի 16-րդ բանակի հրամանատար նշանակելու մասին[14]։ Այս պաշտոնում Բաղրամյանը ծառայեց մինչև 1943 թ. նոյեմբերի 17-ը։ Հենց այդ ընթացքում էր, որ փայլեց գեներալի ռազմական տաղանդը և նրա անունը հայտնի դարձավ երկրով մեկ։ Հատկապես տպավորիչ էր նրա բանակի տարած հաղթանակը Սուխինչի-Ժիզդրա ուղղությամբ՝ 1942 թ. օգոստոս ամսին, որտեղ կասեցվեց հակառակորդի խոշոր զորախմբի հարձակումը և նրան հասցվեց կենդանի ուժի ու տեխնիկայի զգալի վնաս։

Բաղրամյանի գլխավորությամբ 16-րդ բանակը զգալի հաջողությունների հասավ, հատկապես՝ 1943 թվականի ձմռանը Ժիզդրայի ուղղությամբ նոր հարձակման ժամանակ։ Դրա հետևանքով հակառակորդը ստիպված էր հեռանալ Ռժև-Վյազմայի հենակետից, որի շնորհիվ իսպառ վերացավ Մոսկվայի ուղղությամբ թշնամու հարձակման վտանգը։ Ռազմաճակատի գիծը կրճատվեց 300 կիլոմետրով, որը զորքերի առջև ճանապարհ բացեց դեպի արևմուտք։ Ժիզդրայի ուղղությամբ բանակի մարտական գործողությունները հմտորեն ղեկավարելու համար գեներալ-լեյտենանտ Բաղրամյանը 1943 թ. ապրիլի 9-ին պարգևատրվեց Կուտուզովի առաջին աստիճանի զորավարական շքանշանով[15]։ Բարձր գնահատվեց նաև բանակի ողջ անձ-

---

12 Центральный архив Министерства обороны Российской федерации. ф. 33, оп. 682524, д. 419, л. 2.

13 Правда, 28. XII. 1941.

14 Ի. Փ. Բաղրամյան, Այսպես մենք հասանք հաղթանակի, Ե., 1970, էջ 173, 178.

15 Правда, 10. IV. 1943.

նակազմի ցուցաբերած խիզախությունն ու անձնազոհությունը. ԽՍՀՄ պաշտպանության ժողկոմի 1943 թ. ապրիլի 16-ի հրամանով 16-րդ բանակը վերակազմավորվեց 11-րդ գվարդիականի[16]։ Դա մարտական սխրանքների ու հայրենիքի հանդեպ զինվորական պարտքը սրբորեն կատարելու բարձր գնահատականն էր։

Բաղրամյանի զորավարական տաղանդը նոր ուժով դրսևորվեց 1943 թ. ամռանը՝ Օրյալ-Կուրսկ-Բելգորոդ շրջանում հուլիսի 5-ից մինչև օգոստոսի 23-ը տեղի ունեցած ճակատամարտում։ Կուրսկի աղեղում ոչ միայն ամբողջովին չախչախվեցին հակառակորդի 22 հետևակային և 8 տանկային դիվիզիաներ, որոնց միջոցով Հիտլերը մտադրվել էր փոխվրեժ լուծել Ստալինգրադյան ճակատամարտում կրած խայտառակ պարտության համար, այլև ընդմիշտ թաղվեց գեբելսյան ստահոդ քարոզչության ստեղծած սին առասպելը, թե խորհրդային զորքերն ընդունակ են հաղթելու միայն ձմեռային պայմաններում։

Գվարդիայի գեներալ-լեյտենանտ Բաղրամյանի դերը առանձնապես մեծ էր Օրյոլյան գործողության հաղթանակի գործում։ Նա ոչ միայն մասնակցել էր գործողության պլանավորման աշխատանքներին, այլև գերագույն գլխավոր հրամանատարի մոտ այդ պլանի քննարկման ժամանակ համարձակորեն հանդես էր եկել իր անմիջական վերադասի՝ Արևմտյան ռազմաճակատի, ինչպես նաև Բրյանսկի ռազմաճակատի հրամանատարների կողմից առաջարկվող պլանի դեմ։ Գերագույն գլխավոր հրամանատարը համաձայնվել էր Բաղրամյանի համոզիչ փաստարկների հետ և ընդունել նրա առաջարկությունները։ Գործողության հետագա ընթացքը ապացուցեց Բաղրամյանի ճիշտ լինելը։ Հուլիսի 12-ից մինչև օգոստոսի 17-ը 11-րդ գվարդիական բանակը հարձակողական մարտերով անցավ ավելի քան 200 կմ, ազատագրեց ավելի քան 700 բնակավայր։ Կուրսկի ճակատամարտում բանակի ղեկավարությունը հմտորեն իրականացնելու համար ԽՍՀՄ ժողկոմխորհի նախագահի 1943 թ. օգոստոսի 27-ի որոշմամբ Բաղրամյանին շնորհվում է գեներալ-գնդապետի կոչում։ Նույն օրը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով գվարդիայի գեներալ-գնդապետ Բաղրամյանը պարգևատրվում է Սուվորովի առաջին աստիճանի շքանշանով[17]։ Հաշվի առնելով Բաղրամյանի՝ օրեցօր աճող ռազմական ընդունակությունները, նոյեմբերի 17-ին նրան նշանակում են առաջին Մերձբալթյան ռազմաճակատի հրամանատար։ Մեկ օր անց Բաղրամյանին շնորհվում է բանակի գեներալի կոչում[18]։ Բանակի գեներալ Բաղրամյանի հրամանատարությամբ առաջին Մերձբալթյան ռազմաճակատի զորքերը թշնամու դեմ տանում են մի շարք տպավորիչ հաղթանակներ, որոնք ավելի են մոտեցնում հաղթանակի օրը և մեծ չափով նպաստում զորավարի փառքի տարածմանը։ Առաջին նշանակալից հաջողությունը ձեռք բերվեց Վիտեբսկի ուղղությամբ՝ 1943 թ. սեպտեմբերի 13—31-ը անցկացված «Գորոդոկյան» գործողության ժամանակ։

Բաղրամյանն իր զորավարական փառքի գագաթնակետին հասավ 1944 թ. ամռանը՝ Բելոռուսական խոշորամասշտաբ հարձակողական գործողության ժամանակ, որը հայտնի է «Բագրատիոն» անունով։ Նա զորակայանում անձամբ մասնակցել էր գործողության պլանի քննարկմանը և հարձակման գլխավոր ուղղության վերաբերյալ արել արժեքավոր դիտողություններ, որոնք հավանության էին արժանացել Ժուկովի, Վասիլևսկու, ապա՝ Ստալինի կողմից և ընդունվել։ Գործողության նախօրյակին հմտորեն օգտագործելով Դնեպրի և մյուս խոշոր գետերի գրոհանցման ժամանակ

---

16 Советская Военная Энциклопедия, т. 2, М., 1976, с. 491.

17 22 Նորագույն պատմության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ 22 ՆՊՊԿԱ), ֆ. 404, ց. 1, գ. 552, թ. 45։

18 Маршал Баграмян, Сборник документов, с. 55—56.

խորհրդային զորքերի կուսակած հարուստ փորձը՝ Բաղրամյանը մեծ ազատասխանատվությամբ իր բանակները նախապատրաստեց դլխավոր խոշոր-գոտի՝ Արևմտյան Դվինայի հնարավորին չափ արագ և մարդկային նվազ կորուստներով գետանցմանը։ Նախապատրաստական աշխատանքներն ավարտելուց հետո առաջին Մերձբալթյան ռազմաճակատի զորքերը հունիսի 23-ին հրետանու, ավիացիայի և տանկերի հզոր աջակցությամբ անցան հարձակման։ Հաջողությամբ հաղթահարելով ջրային հիմնական արգելքը և խորտակելով հակառակորդի մի քանի շերտերից բաղկացած պաշտպանությունը՝ Բաղրամյանի բանակները հարձակվեցին Վիտեբսկի և Պոլոցկի ուղղություններով։ Հունիսի 26-ին ազատագրվեց Բելոռուսիայի մարզային կենտրոն, երկաթուղային խոշոր հանգույց Վիտեբսկը, իսկ հուլիսի 4-ին՝ Պոլոցկը [Պոլոցկի ազատագրման ժամանակ աչքի ընկավ 51-րդ գվարդիական (նախկին հայկական 76-րդ հրաձգային) դիվիզիան, որն արժանացավ «Վիտեբսկյան», իսկ դնդերը՝ «Պոլոցկյան» պատվանուններին]։ Այնուհետև, զարգացնելով ձեռք բերած հաջողությունը, Բաղրամյանի զորքերը մտան Լիտվա և սրընթաց առաջխաղացումով գերմանաֆաշիստական զավթիչներից ազատագրեցին բազմաթիվ բնակավայրեր, որոնց թվում. հուլիսի 22-ին՝ Պանևեժիս, 27-ին՝ Շաուլյայ քաղաքները, մտան Լատվիայի տարածք, օգոստոսի 1-ին ազատագրեցին Ելգավա քաղաքը, ապա շարժվելով առաջ, դուրս եկան Ռիգայի ծովածոց՝ դրանով իսկ հակառակորդի «Հյուսիս» բանակախումբը կտրելով Արևելյան Պրուսիայից[19]։ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1944 թ. հուլիսի 29-ի հրամանագրով «Բելառուսական» գործողության ժամանակ ռազմաճակատի զորքերը հմտորեն ղեկավարելու, այդ ընթացքում ձեռք բերած ակնառու հաջողությունների, ինչպես նաև ցուցաբերած արիության ու հերոսության համար բանակի զեներալ Բաղրամյանին շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում[20]։

Բաղրամյանի մարտական կենսագրության փառապանծ էջերից են «Մերձբալթյան» և «Արևելապրուսական» ռազմական գործողությունները, որոնց ընթացքում խորհրդային զորքերը ազատագրեցին մերձբալթյան տարածքները, խորտակեցին պրուսական յունկերների միջնաբերդ համարվող Քյոնիգսբերգ ամրոց-քաղաքը։

Մերձբալթյան գործողության բաղկացուցիչ մասերից էր «Մեմելյան» գործողությունը, որի ընթացքում Բաղրամյանի զորքերը 1945 թ. հունվարի 28-ին ազատագրեցին լիտվական Մեմել (Կլայպեդա) նավահանգիստը, որը հակառակորդը դարձրել էր կարևոր ռազմավարական հենակետ Բալթիկ ծովի ափին։ Հիշատակության է արժանի գործողության ընթացքում Բաղրամյանի զորքերի վարպետորեն կատարած քողարկված ղորաշարժը, երբ 6 գիշերվա ընթացքում, հակառակորդից անկախ, Ռիգայի շրջանից Շաուլյայի շրջան փոխադրվեցին ավելի քան կես միլիոն մարդ, 10000 հրանոթ ու ականանետ, ավելի քան 1300 տանկ և ինքնագնաց հրանոթ։ Երբ զորքերի այդպիսի մեծ զանգվածը թշնամուն անսպասելի հայտնվեց նոր ուղղության վրա և խոյընթաց հարված հասցրեց նրան Մեմելի ուղղությամբ, ֆաշիստական հրամանատարությունը, ոչ առանց հիմքի, դա համարեց հրաշք։ Այդ հրաշքի հետևանքով Մերձբալթիկայում գտնվող ֆաշիստական 33 դիվիզիա կտրվեցին Արևելյան Պրուսիայից և սեղմվեցին կուռլանդական պարկում՝ լատվիական Լիեպայա-Վենտսպիլս-Կանդավա շրջանում։ Նրանք անձնատուր եղան 1945 թ. մայիսի 9-ին։

Լիտվան ազատագրելուց հետո առաջին Մերձբալթյան ռազմաճակատի զորքերը Զորականի ցուցումով ուղղվեցին դեպի հարավ՝ Քյոնիգսբերգի ուղղությամբ։ Զորքերի ղեկավարումն ավելի էական դարձնելու նպատակով Զորականյանը 1945 թ. փետրվարի 22-ին վերացրեց Առաջին Մերձբալթյան ռազմաճակատը և նրա բանակների մի մասի հիման վրա ստեղծեց Զեմլան-

---

19 Կ. Ա. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 76—84։

20 Правда, 29. VI. 1944.

դական օպերատիվ զորախումբը, որը մտավ 3-րդ Բելոռուսական ռազմաճակատի կազմի մեջ։ Զեմլանդական զորախմբի հրամանատար նշանակվեց բանակի գեներալ Բագրամյանը։ Նա միաժամանակ ռազմաճակատի հրամանատար մարշալ Վասիլևսկու տեղակալն էր[21]։ Քյոնիգսբերգի գրավման հիմնական խնդիրը դրվեց Բագրամյանի զորախմբի առջև։ Հիսլերը մեծ նշանակություն էր տալիս Քյոնիգսբերգի պաշտպանությանը. քաղաքը վերածվել էր մի անառիկ ամրոցի, որը հագեցած էր բերդամասերով, բազմաթիվ ամրակուսույց կրակակետերով, խոշոր ե պաշտպանության համար հարմարեցված բացառիկ ամրապինդ շենքերով, մարտական տեխնիկայի և հետևակի համար բազմապիսի հնարակերտ արգելափակոցներով, խանդակներով, ջրափոսերով և այլն։ Քաղաք-ամրոցի գրավման պլանը մշակելիս Բագրամյանը մեծ տեղ էր տալիս ցամաքային զորքերի հետ ծովային և օդային ուժերի սերտ փոխգործողությանը։ Որպեսզի զորքերի հրամանատարական կազմն ավելի լավ կողմնորոշվեր գրոհի ժամանակ, մասնագետները հնախուզության ճշգրիտ տվյալների հիման վրա, Բագրամյանի ցուցումով ստեղծել էին բերդաքաղաքի հսկա մակետը, որի վրա ամենայն մանրամասնությամբ ցույց էր տված հակառակորդի պաշտպանական ու ամրոցային կառուցվածքների ամբողջ համակարգը, այն պաշտպանող զորքերի մասին արժեքավոր տեղեկություններ և այլն։ Այս առումով բանակի գեներալին լավ է բնութագրել մարշալ Վասիլևսկին. «Անտարակույս, Բագրամյանը բնատուր կարողություններով օժտված զորավար է։ Նա ունի և՛ հրամանատարական, և՛ շտաբային աշխատանքի փորձ, որը նրան օգնել է հաջողությամբ լուծել ինչպես զորքերը դեկավարելու, այնպես էլ ռազմական գործողությունների պլանների մշակման հարցերը. բնդ որում, նա անպայման ձգտում էր դանել հաղթանակի հասնելու ամենակարճ ճանապարհը»[22]։

Ապրիլի 9-ին Քյոնիգսբերգի կայազորը անձնատուր եղավ։ Ընդամենը չորս օր տևած մարտերի ընթացքում ոչնչացվեց հակառակորդի շուրջ 42 հազար զինվոր ու սպա, 120 ինքնաթիռ, 104 տանկ ու ինքնագնաց հրանոթ, գերի վերցվեց 92 հազար մարդ, այդ թվում՝ 1800 սպա ու գեներալ։ 1945 թ. հունիսի 9-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով հիմնվեց Քյոնիգսբերգի գրավման համար մեդալ, որով պարգևատրվեցին գործողության մասնակիցները՝ ավելի քան 750 հազար մարդ։ Ամրոցի վրա գրոհելիս աչքի ընկած 98 միավորումների ու զորամասերի շնորհվեց «Քյոնիգսբերգյան» պատվանունը, Բանակի գեներալ Բագրամյանը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1945 թ. ապրիլի 20-ի հրամանագրով երկրորդ անգամ պարգևատրվեց Սուվորովի առաջին աստիճանի շքանշանով[23]։

Հայրենական մեծ պատերազմի վերջին մարտական գործողությունը, որին մասնակցեց բանակի գեներալ Բագրամյանը, Քյոնիգսբերգից արևմուտք՝ Զեմլյանդյան թերակղզում պատսպարված ֆաշիստական զորքերի 100-հազարանոց խմբավորման ջախջախման և Բալթիկ ծովի ափին թշնամու վերջին ռազմավարային բազա՝ Պիլլաու (Բալտիյսկ) նավահանգստի գրավման գործողությունն էր (ապրիլի 13—25-ը)։ Գործողության վերջին օրերին Բագրամյանը Զորակայանի որոշմամբ նշանակվել էր 3-րդ Բելոռուսական ռազմաճակատի հրամանատար[24]։ Պիլլաուի (Բալտիյսկ) գրավումից հետո 3-րդ Բելոռուսական ռազմաճակատի հրամանատար, բանակի գեներալ Բագրամյանի հիմնական խնդիրն էր նվաղագույն կորուստներով ավարտել հակառակորդի Զեմլանդական զորախմբի մնացորդների ջախջախումը Ֆրիշեներունգ ցամաքալեղվակում։ 1945 թ. մայիսի 9-ին, Հաղթանակի օրը, հակառակորդի ավելի քան 30-հազարանոց զորախումբը անձնատուր եղավ։

---

21 Ի. Խ. Բագրամյան, նշվ. աշխ., էջ 667։

22 А. М. Василевский, Дело всей жизни, М., 1984, с. 489—490.

23 Маршал Баграмян, Сборник документов с. 70.

24 Ի. Խ. Բագրամյան, նշվ. աշխ., էջ 755։

Ավարտվեց Հայրենական մեծ պատերազմը, որին առաջին օրվանից մինչև վերջ ակտիվորեն մասնակցել էր տաղանդավոր զորահրամանատարը և իր արժանի ավանդը ներդրել ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում։ Նա հպարտության զգացումով էր դիմավորում այդ բաղձալի օրը, որին սպասել էր 1418 օր ու գիշեր։

Հետպատերազմյան տարիներին բանակի գեներալ Բաղրամյանը շարունակեց իր զինվորական ծառայությունը ԽՍՀՄ զինված ուժերի շարքերում և վարեց մի շարք պատասխանատու պաշտոններ՝ իր հարուստ ռազմական փորձը և գիտելիքները ի սպաս դնելով երկրի պաշտպանության ամրապնդման գործին։ 1945—1954 թվականներին նա եղել է Մերձբալթյան զինվորական օկրուգի զորքերի հրամանատար, 1954—1955 թվականներին՝ ԽՍՀՄ պաշտպանության նախարարության գլխավոր տեսուչ, 1955—1956 թվականներին՝ պաշտպանության նախարարի տեղակալ՝ ընդհանուր հարցերի գծով։ 1955 թ. մարտի 11-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով բանակի գեներալ Բաղրամյանին շնորհվեց Խորհրդային Միության մարշալի կոչում։ 1956 թ. Խորհրդային Միության մարշալ Բաղրամյանը նշանակվում է Գլխավոր շտաբի ակադեմիայի պետ՝ ակադեմիա, որտեղ 1936—1940 թվականներին սովորել և աշխատել էր մարշալը[25]։

Զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ, Խորհրդային Միության հերոս, ռազմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Պավել Ռոտմիստրովը, որն այդ տարիներին աշխատում էր նույն ակադեմիայում՝ որպես ամբիոնի վարիչ, բարձր է գնահատել Բաղրամյանի աշխատանքը ակադեմիայի պետի պաշտոնում։ «Նրա ղեկավարությամբ աշխատելը հեշտ էր,—գրում է Ռոտմիստրովը,—նա երբեք նախաձեռնությունը չէր կաշկանդում, իր կարծիքը չէր պարտադրում և համոզելը գերադասում էր կարգադրելուց։ Նա տիրում էր կրկնել, որ գիտությանը չի կարելի հրամայել, ուստի և երբեք իր հեղինակության ծանր լախտը չէր խփում ակադեմիայի գիտնականների գլխներին, եթե որևէ հարցում նրա կարծիքները տարբերվում էին իր սեփական կարծիքից։ Ինձ հաճախ վիճակվում էր ռազմագիտության տարբեր հարցերով բանավիճել ակադեմիայի պետի հետ, բայց մեր վեճերը երբեք չէին փոխանցվում անձնական փոխհարաբերությունների մեջ, այլ ընդհակառակը՝ փոխադարձ հարգանքի համար պայմաններ էին ստեղծվում»[26]։

1958 թ. մարշալ Բաղրամյանը նշանակվում է ԽՍՀՄ պաշտպանության նախարարի տեղակալ՝ զինված ուժերի թիկունքի պետ, այդ պաշտոնում աշխատում մինչև 1968 թ. և խոշոր ավանդ ներդնում խորհրդային բանակի, ավիացիայի և ռազմածովային նավատորմի հզորության բարձրացման գործում։ 1968 թ. ապրիլին մարշալ Բաղրամյանը նշանակվում է պաշտպանության նախարարության գլխավոր տեսուչների խմբի գլխավոր տեսուչ։ Գլխավոր տեսուչների խմբում էին ծառայում խորհրդային բանակի այնպիսի ճանաչված զորահրամանատարներ, ինչպիսիք էին մարշալներ Ժուկովը, Վասիլևսկին, Ռոկոսովսկին, որոնք սրտաբաց են ընդունում այդ պաշտոնում իրենց վաղեմի մարտական ընկերոջ նշանակումը։

ԽՍՀՄ զինված ուժերին մատուցած ակնառու ծառայությունների, Հայրենական մեծ պատերազմում գերմանաֆաշիստական զավթիչների դեմ մղված պայքարում ցուցաբերած արիության և հերոսության համար, ինչպես նաև ծննդյան 80-ամյակի առթիվ, մարշալ Բաղրամյանը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1977 թ. դեկտեմբերի 1-ի հրամանագրով արժանանում է Խորհրդային Միության կրկնակի հերոսի կոչման[27]։

---

25 Маршал Баграмян, Сборник документов, с. 160—161.

26 П. А. Ротмистров, Путь полководца (Тыл и снабжение Советских вооруженных сил, М., 1967, № 11, с. 21).

27 ՀՀ ՆՊԳԿԱ, ֆ. 404, ց. 1, գ. 553, թ. 4։

Մինչև իր կյանքի վերջը, Հովհաննես Բագրամյանը պաշտպանության նախարարության գլխավոր տեսուչների խմբի գլխավոր տեսչի պաշտոնում զգալի աշխատանք է կատարում զինված ուժերի ամրապնդման, հատկապես երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության պետական խիստ կարևոր նշանակություն ունեցող գործի կազմակերպման ուղղությամբ։ Դրա հետ մեկտեղ, նա շատ ժամանակ էր հատկացնում գիտական, գրական, հետազոտական աշխատանքներին, հրատարակում ռազմատեսական հոդվածներ, ռազմական պատմության վերաբերյալ դասագրքեր, Հայրենական մեծ պատերազմի պատմություն լուսաբանող ստվարածավալ աշխատություններ, խորհրդային ականավոր զորավարների մասին հուշեր։ Հիշատակության են արժանի նրա՝ «Հերոս քաղաքը Դնեպրի տափին», «Այսպես է սկսվել պատերազմը», «Այսպես մենք հաստնք հաղթանակի», «Իմ հիշողությունները», «Մարտական փառք», «Մեծ ժողովրդի զավակները» և այլ արժեքավոր գրքեր, որ լայն ճանաչում են գտել և, ռուսերենից ու հայերենից բացի, թարգմանվել անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, բազմաթիվ այլ լեզուներով։ Մեծ զորավարը հետպատերազմյան տարիներին ընդգրկված էր նաև հասարակական-քաղաքական աշխատանքների մեջ. 1952 թվականից նա եղել է ԽՄԿԿ կենտկոմի անդամության թեկնածու, 1961 թ-ից՝ կենտկոմի անդամ, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 2—9-րդ գումարման պատգամավոր։ Հերոսի Ոսկե աստղ՝ երկու մեդալներից բացի, զորավարը պարգևատրվել է Լենինի՝ 7, Հոկտեմբերյան հեղափոխության՝ մեկ, Կարմիր դրոշի՝ 3, Սուվորովի առաջին աստիճանի՝ երկու, Կուտուզովի առաջին աստիճանի՝ մեկ, Հայրենիքի և ԽՍՀՄ զինված ուժերի ծառայության համար 3-րդ աստիճանի շքանշաններով, բազմաթիվ մեդալներով, պատվավոր անձնական զենքով, օտարերկրյա շքանշաններով ու մեդալներով[28]։

Իր զինվորական, պետական, հասարակական գործունեության ընթացքում մարշալ Բագրամյանը մշտապես կապված է եղել իր հարազատ ժողովրդի հետ, հաճախակի այցելել հայրենիք, մասնակցել մի շարք հոբելյանական միջոցառումներ, հանդիպումներ ունեցել Արարատյան դաշտավայրի, Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Վայքի, Սյունիքի և Արցախի բնակչության լայն խավերի հետ։ Նա սերտ բարեկամական կապեր ուներ Մարտիրոս Սարյանի, Վիկտոր Համբարձումյանի, Արամ Խաչատրյանի, Անաստաս և Արտեմ Միկոյանների, իր համազյուղացի՝ զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ Համազասպ Բաբաջանյանի, Խորհրդային Միության նավատորմի ծովակալ Հովհաննես Իսակովի, գիտության, մշակույթի, պետական բազմաթիվ այլ գործիչների հետ։ Նա շատ համեստ ու զուսպ մարդ էր, ատում էր կեղծավորությունն ու շողոքորթությունը։ Նրա ենթականերից, ծանոթներից ոչ մեկը չէր հիշում որևէ դեպք, որ Բագրամյանը ձայնը բարձրացներ կամ իրեն թույլ տար բարկանալ։ Բանակի գեներալ Կուրասովը, որը առաջին Մերձբալթյան ռազմաճակատի շտաբի պետն էր, այդ մասին գրում է. «Իվան Քրիստափորովիչը ուժեղ կամքի տեր մարդ էր։ Նա որոշումներն ընդունում էր սառնասիրտ տատանումների և նույնիսկ ամենածանր ժամանակ երբեք չէր բղավում, չէր սպառնում, մինչև անգամ ձայնը չէր բարձրացնում։ Բայց ենթականերից յուրաքանչյուրը նրա կամքն ու հրամանները կատարում էր անառարկելիորեն։ Այդ ամենից բացի, նա հոգի մարդ էր, նրա հետ աշխատելը հեշտ էր»[29]։

Մարշալ Բագրամյանը, լինելով ժամանակի ամենաղարգացած ռազմական գործիչներից, միաժամանակ արվեստասեր մարդ էր։ Նա շատ էր սիրում դեղանկարչությունը՝ Իլյա Ռեպինի, Լևիտանի, Կրամսկոյի ստեղծագործությունները, Մարտիրոս Սարյանի բնանկարները, Դմիտրի Նալբանդյանի նատյուրմորտներն ու դիմանկարները։ Նա ակտիվ, լրջախոհ թատե-

---

28 Ալբերտ Դասպարյան, Լուսանկարների ալբոմ Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բագրամյանի մասին, Մոսկվա, 1992, էջ 388։

29 Մ. Մերժանով, Զինվոր, գեներալ, մարշալ, Ե., 1975, էջ 122։

բասեր հանդիսանում էր, բայց չէր թողնում Մոսկվայի Գեղարվեստական, Ակադեմիական և Փոքր թատրոնների որևէ նոր ներկայացում, կարող էր շատ անգամ դիտել Օստրովսկու և Չեխովի դրամաները։ Բաղրամյանը շատ էր սիրում ընթերցել։ Նրա գրադարանը ոչ միայն լի էր ռազմապատմական, մասնագիտական գրքերով, այլև կողք կողքի շարված էին ռուսական, հայկական, համաշխարհային դասականների երկերը։

Հմայիչ մարդու, գիտնականի և ականավոր զորավարի կյանքի թեյը կտրվեց 1982 թ. սեպտեմբերի 21-ին՝ Մոսկվայում. կառավարության որոշմամբ նրա թաղումը կազմակերպվեց սեպտեմբերի 24-ին՝ Կարմիր հրապարակում, Կրեմլի պարսպի մոտ[30]։

Զորավարի անունը հավերժացնելու նպատակով, 1983 թ. մայիսի 6-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով Հայաստանում կազմավորվեց վարչական նոր շրջան, որը կոչվեց Բաղրամյանի անունով։ Նույն օրը Երևանի քաղխորհրդի գործկոմի որոշմամբ Բարեկամության փողոցը վերանվանվել է Բաղրամյան պողոտա, իսկ մետրոպոլիտենի Սարալանջ կայարանը՝ Մարշալ Բաղրամյան։ 1984 թ. աշնանը Կերչի նավաշինարանները կառուցեցին «Մարշալ Բաղրամյան» վիթխարի հեղուկանավը, որը գրանցվեց Նովոռոսիյսկի ծովային նավագնացությունում[31]։

Մարշալ Բաղրամյանի հիշատակը վառ է մնում Հայաստանի Հանրապետությունում։ Այդ են վկայում ականավոր զորահրամանատարի ծննդյան 100-ամյակին նվիրված հանդեսները[32], որոնք տեղի ունեցան Հայաստանի տարբեր քաղաքներում։

Բաղրամյանի հիշատակը մեծ շուքով նշվեց նաև Մոսկվայում։ Հայրենական մեծ պատերազմի համալիրում բացվեց ճոխ ցուցահանդես՝ նվիրված մարշալ Բաղրամյանի ծննդյան 100-ամյակին։

ПОЛКОВОДЕЦ, УЧЕНЫЙ, ЧЕЛОВЕК

К. А. АРУТЮНЯН

Резюме

Имя дважды Героя Советского Союза, Маршала Советского Союза И. Х. Баграмяна золотыми буквами вписано в летопись истории Великой Отечественной войны вместе с именами таких выдающихся военачальников, какими были маршалы Советского Союза, четырежды Герой Советского Союза Г. К. Жуков, дважды Герои Советского Союза А. М. Василевский, К. К. Рокоссовский, И. С. Конев, Р. Я. Малиновский, Герои Советского Союза А. И. Еременко, Ф. И. Толбухин, Л. А. Говоров, которые на завершающем этапе Великой Отечественной войны были командующими фронтами и вошли в историю как Маршалы Победы.

И. Х. Баграмян родился 2 декабря 1897 года, умер 21 сентября 1982 года. Он прожил 85 лет, 67 из которых отдал службе в армии, священному делу защиты Отечества. В 1915 году добровольцем вступив в русскую армию, он от рядового солдата дошел до маршала. В разные времена Баграмян командовал взводом, кавалерийским эскадроном, кавалерийским полком, был начальником штаба дивизии, оперативных отделов штаба армии, округа и фронта, стал командую-

---

30 Правда, 25. IX. 1982.

31 Կ. Ա. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 130։

32 Հայաստանի Հանրապետություն, 13. V. 1997։

ацим 11-й Гвардейской армии, 1-го Прибалтийского фронта и т. д. Активно участвовал в Киевской, Харьковской оборонительных операциях, Курской битве, в освобождении Белоруссии, Прибалтики, Восточной Пруссии. После войны командовал Прибалтийским военным округом, был начальником Военной академии Генштаба, заместителем Министра Обороны СССР—начальником тыла Вооруженных Сил СССР, Генеральным инспектором Группы генеральных инспекторов МО СССР. В свое время Баграмян окончил 6 военных учебных заведений, в том числе: академии имени М. В. Фрунзе и Генштаба. Несмотря на большую занятость по службе, он вел активную общественно-политическую и военно-научную деятельность, внес весомый вклад в обобщение опыта Великой Отечественной войны, издал ряд книг: «Город-воин на Днепре», «Так начиналась война», «Так мы шли к Победе», «Мои воспоминания», «Боевая слава», «Великого народа сыновья».